ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հաստատության անունը....3
2. Հաստատության գործունեությունը....4
2.1 Շենքային պայմաններ....5
2.2 Դպրոցի Առաքելությունը....6
ցանկալի ապագայի մտապատկերն է....6
3.1ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ....12
3.2 Մանկավարժական խորհուրդ....13
3.3 Առարկայական մեթոդական միավորումներ....14
3.4 Ծնողական խորհուրդ՝....15
3.5 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ՝ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ....16
4. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ....18
5. ՍԱՀՄԱՆՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ և ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ և ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ....19
6. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ....30
7. ՌԻՍԿԵՐ....31
8. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ և ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ....32
9. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ....35

1. Հաստատության անունը

<<Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան թիվ 1 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի անունը կրող թիվ 1 հիմնական դպրոցը գտնվում է ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ

ՀԱՍՑԵՆ՝ Ք ՎԱՆԱՁՈՐ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ 10
ՀԵՌԱԽՈՍ+374 322 24368
email: vanadzor1@schools.am
պաշտոնական էլ. փոստ
1000197@e-citizen.am
(միայն www.e-citizen.am համակարգով ծանուցումների համար)

2. Հաստատության գործունեությունը

«Վանաձորի Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը կառուցվել է 1937թ.-ին: Սկզբնական շրջանում կոչվել է Սերգեյ Միրոնովիչ Կիրովի անունով: Դպրոցը վերանվանվել է 1955թ.-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի անունով: Կապիտալ վերանորոգվել է 2001թ.-ին:

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 2017 թվականին:
Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով տրված լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը.
Լիցենզիա Ա.0481
տարրական, ընդհանուր սահմանային տեղով,
Լիցենզիա Ա.0481
հիմնական, ընդհանուր սահմանային տեղով,

<u>Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի տրման ամսաթիվը, համարը N 04102017-06-0013:</u>

2.1 Շենքային պայմաններ

Շենքը եռահարկ է, հարմարեցված, ունի մարզադահլիճ, գրադարան, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) կրթություն ստացող սովորողների համար մասնագետների հետ աշխատելու հարմարեցված սենյակ, «Արմաթ» լաբորատորիա, բնագիտական առարկաների լաբորատորիա:

Դպրոցում առկա է Արցախյան 44-օրյա պատերազմում նահատակված զինվորների անվան դասասենյակ՝ հագեցած նորագույն տեխնոլոգիաներով:

Ունի հարակից գեղեցիկ ծաղիկների այգի և խաղադաշտ:

Ջրամատակարարումը շուրջօրյա է, առկա է սանհանգույց, ջեռուցվում է կաթսայատան միջոցով՝բնական գազով:
Պատուհանները հիմնականում եվրոպատուհաններ են:
Ամենամյա մասնակի վերանորոգման աշխատանքներն ու հետևողականությունը հնարավորություն են տալիս մինչ օրս ունենալ բարեկարգ շենքային պայմաններ:
Անձնակազմը ներկա պահին կազմված է 68 հոգուց, որից 50-ը մանկավարժներ են որից՝
Ուսուցիչներ՝40, որից՝
3-ը անցել են կամավոր ատեստավորում,
5-ը ունեն տարակարգ
հաստիքային մանկավարժ՝ 10,
վարչական աշխատող՝3,
ուսումնաօժանդակ՝ 14 :
Դպրոցի բոլոր հաստիքները զբաղված են:
Ներկայումս դպրոցում սովորում է 634 աշակերտ:

2.2 Դպրոցի Առաքելությունը ցանկալի ապագայի մտապատկերն է

Դպրոցի առաքելությունը ազգանվեր,հայրենասեր,համամարդկային արժեքներով օժտված մարդ կերտելն է:

.Դպրոցի առաքելությունը բարենպաստ կրթական միջավայրի ապահովման միջոցով, ազգային հենքի վրա, հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան անձի ուսուցման և զարգացման գործընթաց է: «Յուրաքանչյուր երեխայի հնարավոր լավագույն կրթություն տալը մեր բարոյական պարտականությունն է, քանզի քաղաքացիական առողջ հասարակության և սերնդի համար վաղվա օրը ձևավորվում է այսօր»:

Կարծում եմ՝ սա այն հիմնական ու առանձնահատուկ մոտեցումն է, որ ցուցաբերում է մեր դպրոցը սովորողի հանդեպ:Մենք սովորեցնում ենք սիրել աշխարհը, սիրել՝ ճանաչելով այն: Ուշադրության կենտրոնում մարդն է, սովորողը՝ իր անհատականությամբ, իր յուրօրինակ նկարագրով, և մեր նպատակը պետք է լինի առաջին հերթին օգնել աշակերտին, որ կայանա որպես առաքինություններով ու արժեքներով օժտված լիարժեք անձ՝ մարդ, որը ձգտում է ճանաչելու, համագործակցելու, արարելու, մարդ, որը մտածող է և ստեղծագործող: Աշակերտը պետք է գնահատի մեր հոգևոր արժեքները, հավատարիմ մնա ազգային մտածողությանն ու ավանդույթներին: Հասկանա ու պահպանի այն ամենն, ինչն ունենք մենք, և որը պետք է փոխանցենք սերունդներին: Ձևավորի և կատարելագործի իր գիտելիքները, հմտությունները, կարողությունները և արժեքային համակարգը: Լինի ոչ միայն սովորող, այլև՝ սովորեցնող:

Եվ եթե մենք առաջնորդվում ենք այս սկզբունքով, ապա ստանում ենք ցանկալի արդյունք՝ բազմակողմանի զարգացած, հարուստ մտահորիզոն և հստակ նպատակներ ունեցող մարդ-անհատներ՝ պատրաստ հաղթահարելու ցանկացած դժվարություն իր նպատակին հասնելու ճանապարհին: Այս բոլորը լոկ բարի կամեցողության դրսևորում չէ, այլ իրական հենքի վրա կառուցված ամուր կրթօջախի առաքելություն, որն ունի հարուստ ավանդույթներ, փորձառու մանկավարժական անձնակազմ, առկա ռեսուրսներ:

2.3 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքը՝ ազգային դպրոցն է, որի մեծագույն նպատակը ազգային արժանապատվության գնահատումն է: Իսկ դրա համար ազգային մշակույթի, արժեքների, լեզվի պահպանումը առաջնային է և շարունակելու է մնալ առաջնային:

Պետական քաղաքականության և հասարակական գիտակցության մեջ կրթությունը շարունակում է մնալ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

Դպրոցի նպատակը պետք է լինի ձևավորել ընդմիշտ սովորողներ, որոնք կցանկանան սեփական ներուժն իրագործելու և ապագայի պատասխանատվությունն ստանձնելու լիարժեք հնարավորություն ունենալ:

Անհրաժեշտ է հաշվի առնել համաշխարհային կրթության առաջատար ձեռքբերումները և հայ դպրության լավագույն ավանդները՝ առաջնորդվելով լավագույնը վերցնելու սկզբունքով:

Մեր ժամանակները կարելի է բնորոշել որպես բոլոր ոլորտներում ընթացող սրընթաց և դինամիկ փոփոխությունների ժամանակաշրջան:
Արագընթաց զարգացում ապրող տեղեկատվական տեխնոլոգիաների և գլոբալ ինտեգրման 21-րդ դարաշրջանը պահանջում է առաջանցիկ փոփոխություններ կրթական ոլորտում:

Նման պայմաններում հաջողակ են այն անհատներն ու պետությունները, որոնք առավել արդյունավետ են կարողանում կիրառել նորագույն գործիքները և բաց են շարունակ տեղի ունեցող զարգացումների առջև, միևնույն ժամանակ կարողանում են պահպանել և զարգացնել իրենց ազգային մշակույթն ու ինքնությունը:

Այս պայմաններում կրթության ոլորտի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ միաժամանակ ապահովելով կրթական համակարգի արդյունավետ գործունեությունը:
Որպես դպրոցի հեռանկար՝ շատ կարևորվում է կրթական գործընթացում ժամանակից հետ չմնալը:

Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը և մատչելիությունը՝ քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու համար:

Վանաձորի Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան թիվ 1 հիմնական դպրոցն իր պատմության ընթացքում ունեցել է բազմաթիվ հաջողություններ ու նվաճումներ, կյանք է ճանապարհել տասնյակ երիտասարդների, որոնք իրենց արժանի տեղն են զբաղեցրել հասարակության մեջ, իսկ հայրենիքի օրհասական պահին նրանցից շատերը իրենց կյանքը չեն խնայել հայրենիքի պաշտպանության համար:

Հիմք ընդունելով դպրոցի կողմից արդեն իսկ արձանագրված ձեռքբերումները՝ սույն ծրագիրն ուղղված է դրանց աստիճանական զարգացմանը՝ նախանշելով դպրոցի զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունը՝ ձևավորելու պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ քաղաքացիներ:

Դպրոցն ունի բարելավման և նյութատեխնիկական բազայի հարստացման, անձնակազմի մասնագիտական որակավորման մակարդակի հետագա բարձրացման, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին համապատասխան կրթություն տալու և այլ հիմնախնդիրներ: Համագործակցելով պետական և հասարակական կառույցների հետ ու հաշվի առնելով միջոցների սահմանափակությունը՝ անհրաժեշտ է նախապատվություն տալ այնպիսի ռազմավարության, որոնք հնարավորություն են տալիս

ա)համեմատաբար փոքր ներդրումներով ստանալ առավելագույն արդյունք,

բ) առաջնությունը տալ այն արդյունքներին, որոնք հասանելի են համեմատաբար կարճ ժամանակահատվածում,

գ)ստեղծել զարգացումների համար բարենպաստ միջավայր՝ սահմանելով անհրաժեշտ կանոններ, զարգացման ուղիներ, որոնք նաև կխթանեն առանձին կազմակերպությունների ու անհատների նախաձեռնությունները:

Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը ենթադրում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և հանրակրթական ուսումնական հաստատությունների նկատմամբ վերաբերմունքի ճշգրտում:

3. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վանաձորի Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան թիվ 1 հիմնական դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար նախ անհրաժեշտ է վերլուծել առկա իրավիճակը, բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, վեր հանել առկա հիմնախնդիրները:

Վերլուծությունը համակարգված իրականացնելու համար նպատակահարմար է այն կատարել ըստ որոշակի ոլորտների՝ առավելագույնս ընդգծելով դպրոցի ուժեղ և թույլ կողմերը:

Բացահայտենք ուժեղ և թույլ կողմերը՝ վեր հանելով առկա հիմնախնդիրները

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
1. Դպրոցի գործունեությունը կանոնավորող իրավական ակտերի առկայությունը (կանոնադրություն, ներքին իրավական ակտեր) 2. Կառավարման և խորհրդակցական մարմինների կազմակերպված աշխատանքը 3. Աշակերտական համակազմը 4. Մանկավարժական համակազմը 5. Կրթական կառավարման մարմինների հետ համագործակցությունը 6. Համայնքի հետ համագործակցությունը 7. Ուսումնական բարենպաստ միջավայրը 8. Սոցիալական բարենպաստ միջավայրը	1.Դպրոցի ֆինանսական միջոցների սղությունը 2. Ուսուցիչների ինքնակրթության պակաս,Ֆորս-մաժորային իրավիճակների առկայության դեպքում աշխատանքի առավել բարդացում: 3. Առաջացող փոփոխություններին դժվար ինտեգրում: Ուսուցիչների ատեստավորման կարգի դժվարություններով պայմանավորված մոտիվացիայի անկում, հիասթափություն: Ուսուցիչների աշխատանքի գնահատման պակաս: 4. Ոչ բոլոր ուսուցիչներն են թարմացնում իրենք գիտելիքները, հիմանականում դա արվում է վերապատրաստման ժամանակ: Ուսուցիչների ժամանակակից մեթոդաբանության սակավ կիրառում: 5. Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների փոքր թվաքանակ թվաքանակ 6. Տարակարգ ունեցող ուսուցիչների փոքր թվաքանակ թվաքանակ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
	7. Ուսումնառության բարձր արդյունքները խրախուսող ծրագրերի, մեթոդների պակաս 8. Ոչ բոլոր աշակերտներն են հետաքրքրված նորարարական ծրագրերով:
ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
1. Կապիտալ վերանորոգվել է 2001թ.-ին: 2. Դպրոցի շենքային պայմանները թե՛ ամռան, թե՛ ձմռան ամիսներին նպաստավոր են կրթական գործընթաց իրականացնելու համար: 3. Ձմռանը ջերմային անհրաժեշտ ռեժիմը պահպանվում է ինչպես դասասենյակներում, այնպես էլ դահլիճներում և միջանցքներում:	1. Կապիտալ վերանորոգման է ենթակա դպրոցի սանհանգույցը 2. Նկուղային հարկում գտնվող պահեստները, որոնք խնոնավանում են անձրևաջրերի ներթափանցման պատճառով: 3. Դպրոցի տարածքից ջրահեռացման աշխատանքների կազմակերպում: 4. Դահլիճին կից հանդերձարանների անմխիթար վիճակ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ	
Դպրոցում առկա է հարուստ նյութատեխնիկական բազա, որը հնարավորություն է տալիս աշակերտներին զարգանալու, ձեռք բերելու ժամանակակից մարդուն հատուկ գիտելիքներ, տիրապետելու ՏՀՏ-ներին: 1. Դպրոցն ունի «ԱՐՄԱԹ» լաբորատորիա: «ՍՄԱՐԹ» համակարգչային սենյակում առկա է թվով 15 համակարգիչ, 4 դյուրակիր համակարգիչ, էլեկտրոնային գրատախտակ: 2. Համակարգիչներ առկա են ոչ միայն «ՍՄԱՐԹ» դասասենյակում, այլ նաև առանձին աշխատասենյակներում, գրադարանում: Ընդհանուր 23 համակարգիչ, որից 6-ը՝ դյուրակիր 3. Բնագիտական առարկաների լաբորատորիայում առկա են լաբորատոր սարքավորումներ 4. Ժամանակակից սարքավորումներով հագեցած է ՆԶՊ դասասենյակը	Դպրոցում բուֆետի բացակայությունը

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
5. մարզադահլիճը ապահովված է համապատասխան մարզագույքով	
ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Սպորտային հաջողություններ Հաջողություններ տարբեր մրցույթներում	Առարկայական օլիմպիադաներում աշակերտների մասնակցության ցածր ցուցանիշ

3.1ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության խորհուրդն է:
Անհրաժեշտ է ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունման, բյուջեի ճիշտ պլանավորման, կրթության պետական կառավարման մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման, դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ առաջարկությունների ներկայացման և մի շարք այլ ուղղություններով:
Խորհրդակցական մարմիններ՝
Դպրոցում կազմավորված են խորհրդակցական մարմիններ՝

- Մանկավարժական խորհուրդ
- Առարկայական մեթոդական միավորում
- Ծնողական խորհուրդ
- Աշակերտական խորհուրդ

Խորհրդակցական բոլոր մարմինները պետք է ունենան իրենց կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Խորհուրդները պետք է ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները:

Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս: Հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է:

3.2 Մանկավարժական խորհուրդ

Եթե առկա է ֆինանսավորում, ուսումնական միջավայր և հանրակրթություն իրականացնելու օրենսդրություն, ապա ուսուցման գործընթացը կարող ենք կազմակերպել, եթե ունենք սովորեցնող և սովորող:Ուսումնական գործընթացի այս երկու մասնակիցներին առանձին-առանձին դիտարկելիս պատկերը թերի կլինի: Ուսուցիչները և աշակերտները մեկ միասնական համակարգ են, և նրանց գործունեությունը փոխկապակցված է: Մենք պետք է կարողանանք գնահատել մեր մանկավարժական պոտենցիալը

Դպրոցում առկա են

- *փորձառու, ուսուցիչ-առաջնորդ, ուսումնական գործընթացում նախաձեռնողականություն և ստեղծարարություն դրսևորող մանկավարժներ*
- *Իրենց գործին անմնացորդ նվիրված ուսուցչական կազմ*
- *Մանկավարժական կոլեկտիվի համախմբվածություն*
- *ժողովրդավարական աշխատառճ, ազատ արտահայտվելու հնարավորություն, քննադատական մոտեցում*

Դպրոցում աշխատում են 50 մանկավարժական աշխատողներ, այդ թվում՝

- Տնօրեն, ուսումնական և ՄԿԱ գծով փոխտնօրեններ,
- Դաստիարակչական աշխատանքի կազմակերպիչ
- 2 օպերատոր
- 40 ուսուցիչ,
- 4 ուսուցչի օգնական
- 1 լաբորանտ
- 1 գրադարանավար

Դպրոցի ուսուցիչ- աշակերտ հարաբերակցությունը՝ 1/12

Ուսուցչի միջին դրույքաչափը՝ 0,79

Տարակարգ ունեն 2 ուսուցիչ, Ունենք 1 մենթոր ուսուցիչ

3.3 Առարկայական մեթոդական միավորումներ

- ուսումնասիրում, ընդհանրացնում են մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում.
- նպաստում են ուսուցիչների որակավորման բարձրացմանը.
- կազմակերպում են մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ.
- ուսուցիչներին հաղորդակից են դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում են սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ.

Դպրոցում գործում են 7 առարկայական մեթոդական միավորումներ՝

- Մաթեմատիկայի մեթոդմիավորում
- Հայոց լեզվի և գրականության մեթոդմիավորում
- Օտար լեզուների մեթոդմիավորում
- Պատմության մեթոդմիավորում
- Տարրական դասարանների մեթոդմիավորում
- Բնագիտական մեթոդմիավորում
- Ռազմագիտության և ընդհանուր զարգացման առարկաների մեթոդմիավորում:

3.4 Ծնողական խորհուրդ՝

Ազգերի ապագան մայրերի ձեռքերում է:

ՕՆՈՐԵ ԴԵ ԲԱԼԶԱԿ

Դպրոցի ծնողական խորհուրդը կազմված է 22 անձից:

Ծնող-երեխա ուսման, դաստիարակության ու զարգացման գործում դպրոցի առաջին համագործակիցն է, այդ պատճառով անհրաժեշտ է՝

- *Ամենօրյա աշխատանքի արդյունքում ձեռք բերել փոխադարձ վստահություն և հարգանք, ամրապնդել ծնող-դպրոց կապը*
- *Խթանել ծնողների շահագրգռվածությունը որակյալ կրթություն իրականացնելիս*
- *Ընդգրկել ծնողներին ուսման կարևորագույն գործառույթներում*
- *Ներգրավել արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին*
- *Ամրապնդել ծնողական խորհրդի կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը*
- *Աջակցել ծնողական խորհրդի աշխատանքների կազմակերպմանը՝ հատկապես սովորողների սոցիալ-կենցաղային աշխատանքների բնագավառում*
- *Կազմակերպել համատեղ հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար՝ ներկայացնելով դպրոցի գործունեությունը ու հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքները, լսել և քննարկել նրանց հետաքրքրող հարցերը*
- *Կարևորում եմ ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորումը*
- *Լսելի դարձնել ծնողական խորհրդի առաջարկությունները և ընթացք տալ*
- *Հնարավորինս ամրապնդել ծնողի և դպրոցի միջև ամուր կապը*

3.5 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ՝ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դպրոցի Աշակերտական խորհուրդը կազմված է 33 անդամից

- Աշակերտական խորհուրդը սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմին է, որի գործունեության հիմնական սկզբունքներն են՝ կամավորությունը, սովորողների իրավահավասարությունը, կառավարման կոլեգիալությունը և հրապարակայնությունը:

Սովորողների ինքնավարության հիմնական խնդիրներն են՝

- համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը նպաստելը.
- ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը նպաստելը.
- հաստատությունում ժողովրդավարության, սովորողների ինքնակազմակերպման և ինքնակառավարման կարողությունների զարգացմանը նպաստելը.
- սովորողների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը օժանդակելը.
- սովորողների իրավունքների և պարտականությունների լիարժեք գիտակցմանն ու իրացմանը օժանդակելը.
- հաստատության սովորողների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը.
- սովորողների առողջության, կյանքի անվտանգության, սոցիալական ապահովության ուղղությամբ իրականացվող միջոցառումներին աջակցելը և սովորողների նախաձեռնությունների ապահովմանը օժանդակելը.
- հաստատությունում սովորողների կրթության և ինքնակրթության, նրանց համակողմանի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանն օժանդակելը.

- երիտասարդ սերնդի, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական, ժողովրդավարական պետության կառուցմանը օժանդակելը:

4. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Սույն վերլուծությունը ցույց է տալիս,որ՝

- Հետագա տարիներին մեր ուշադրության կենտրոնում պետք է պահենք թույլ կողմերը և ձեռնարկենք համապատասխան միջոցներ դրանք զարգացնելու համար:
- Որ նպատակներն ու խնդիրները լուծելու ուղիներ փնտրել և լուծման ճանապարհ գտնել հենվելով դպրոցի ուժեղ կողմերի վրա:
- Որ պետք աշխատել թույլ կողմերի վրա, միաժամանակ չանտեսելով ուժեղ կողմերը և ոչ մի ջանք չխնայել դրանք պահելու, էլ ավելի ուժեղացնելու, դպրոցի ուսման որակը և հեղինակությունն էլ ավելի բարձրացնելու համար:

5. ՍԱՀՄԱՆՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ և ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ և ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Նպատակներ և խնդիրներ	Կատարման հնարավորություն	Կատարման ժամանակի ատված	Կատարման պատասխանատու
Դպրոցի շենքային պայմանների բարելավում, ժամանակակից կրթական պահանջները բավարարող ուսումնական (ֆիզիկական) միջավայրի ապահովում: Գույքով և տեխնիկայով ապահովված, հարմարեցված ուսումնական միջավայր:	Բակի երկաթբետոնե սալիկների հարթեցում: Դպրոցի սանհանգույցների հիմնովին վերանորոգում: Դպրոցի տարածքից ջրահեռացման աշխատանքների կազմակերպում:	**Հաշվետու ժամանակ ահատվածում**	Տնօրեն Համակարգող Հաշվապահ Կառավարման խորհուրդ
Իրվական ակտերի, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ճիշտ վարում, օրենսդրական նորմերի պահպանում:	Հետևել իրավական ակտերում կատարվող փոփոխություններին: Կազմակորպել իրազեկման սեմինարներ շահառու աշխատակիցների համար	**Հաշվետու ժամանակ ահատվածում**	Տնօրեն
Դպրոցի զարգանումն ապահովելու նպատակով՝ ֆինանսական կայուն հոսքերի ապահովում:	1. Ապահովել հուսալի հարաբերություններ բարերարների հետ: **2.** Դպրոցի կայացած, գործարար շրջանավարտներից ստեղծել շրջանավարտների խորհուրդ, որը կօժանդակի դպրոցի ֆինանսական		

	գործունեությանը:	**2023-2024ուս. տարի**	Տնօրեն Համակարգող Հաշվապահ
Էներգիայի վրա ծախսվող գումարի տնտեսում	Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի ձեռք բերում	**Հաշվետու ժամանակ ահատվածում**	Տնօրեն Համակարգող Հաշվապահ
Կառավարման, խորհրդակցական մարմինների համագործակցային, կառուցողական հարաբերությունների ձևավորում: Կառավարման խորհրդի, խորհրդակցական մարմինների դպրոցամետ գործունեություն՝ ըստ կարգով վերապահված գործառույթների	1. Կոլեգիալ կառավարման մարմնին ներգրավել դպրոցում իրականացվող միջոցառումներին, իրազեկել և ժամանակին կատարել նախատեսված աշխատանքները: 2. Կոլեգիալ կառավարման մարմնի, խորհրդակցական մարմինների հետ հաճախակի հանդիպումների արդյունքում ունենալ իրազեկված, դպրոցի ընթացիկ գործունեության մասին լիարժեք տեղեկացված խորհուրդ և խորհրդակցական մարմիններ: 3. ԾԽ և ԱԽ ակտիվ ներգրավվածություն արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում	**Հաշվետու ժամանակ ահատվածում**	Տնօրեն **Խորհրդակցական մարմիններ**
Դպրոցի կանխատեսելի բարեփոխումները առաջին հերթին կախված են մանկավարժական համակազմի որակական բարելավումից: Գիտատեխնիկական բարեփոխումներին	1. Անհրաժեշտ է ձեռնարկել ուսման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ: 2. Հետևողականություն կրթական որակի նկատմամբ, հաճախակի դասալսումներ, նոր	**Պարբերաբար, ըստ անհրաժեշտության**	**Տնօրենություն** **Մեթոդ**

զուգընթաց ուսուցիչները ունեն անհրաժեշտություն վերապատրաստումների, ոչ միայն բուն մասնագիտական, այլ նաև տեխնիկական՝ կապված ՏՀՏ-ի գործածության հետ: Անհրաժեշտ է ունենալ վերապատրաստված, նորարական գաղափաներով օժտված ուսուցչական և մանկավարժական համակազմ: Ձեռնարկել ուսման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ::	մեթոդների կիրառման խրախուսում: 3. Խրախուսել ուսուցիչների մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին, ինքնակրթությունը: 4. Վերապատրաստման ընթացքում ստացած գիտելիքների կիրառելիություն դասապրոցեսի ընթացքում 5 Մշակել խրախուսման մեխանիզմներ այն ուսուցիչների համար, որոնք ներկայացնում են որևէ նորարարական, ինքնուրույն մշակված ծրագիր:.		**միավորումներ**
Կամավոր ատեստավորում անցած և տարակարգ ունեցող ուսուցիչների փոքր թվաքանակ	**Աշխատել կամավոր ատեստավորմանը մասնակցող և տարակարգ ունեցող ուսուցիչների քանակի ավելացման ուղղությամբ՝ խրախուսել, աջակցել; Մեթոդ միավորումների նիստերում քննարկումներ, վերլուծություններ անել, օգնել հաղթահարելու կասկածները և մասնակցելու:** ----18----	**Հաշվետու ժամանակ ահատվածում**	**Տնօրենություն Մեթոդ միավորումներ**
Մեթոդմիավորումների աշխատանքի արդյունավետության	1. Փորձի փոխանակման նպատակով ձևավորել միջդպրոցական մեթոդական միավորումներ	**Պարբերաբար, ըստ անհրաժեշտության**	**Տնօրենություն Մեթոդ միավորումներ**

բարձրացման միջոցառումները կնպաստեն ուսուցիչների որակավորման բարձրացմանը և կրթության որակի բարձրացմանը:	2. Ուսումնասիրել և տարածել առաջավոր փորձը:		
Դպրոց-ծնող-համայնք կապերի ամրապնդում: Ծնողական խորհրդի աջակցությունը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներին Ծնողական խորհրդի աջակցությունը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներին	Ծնողներին ներգրավել դպրոցում իրականացվող աշխատանքներում՝ 1. Բարձրացնել ծնողական խորհրդի դերն ու մասնակցությունը դպրոցին վերաբերող կարևոր հարցերի լուծման գործում: Կարևորագույն որոշումներ կայացնելիս հաշվի առնել ծնողների կարծիքը 2. Ակտիվացնել և խրախուսել առավել ակտիվ ծնողներին 3. Սահմանել ժամանակացույց ծնողների կատարած աշխատանքների մասին հաշվետվություն ներկայացնելու համար 4. Հաճախակի կազմակերպել սոցիոլոգիական հարցումներ ծնողների շրջանում դպրոցի գործունեության վերաբերյալ: ----19---- 5. ԾԽ-ի կողմից ծնողների հետ տարվող աշխատանքը՝ սովորողների հաճախումների, ուշացումների և վարքագծային շտկումների	**Հաշվետու ժամանակ ահատվածում**	**Տնօրենություն Ծնողական խորհուրդ**

	ուղղությամբ, պասիվ ծնողներին ինտեգրելու, ներգրավելու դպրոցական աշխատանքներում: 6. Ծնողական խորհրդի համագործակցություն համայնքի տարբեր սոցիալական խմբերի հետ 7. ԾԽ-ի կողմից ծնողների հետ տարվող աշխատանքը՝ սովորողների հաճախումների, ուշացումների և վարքագծային շտկումների ուղղությամբ, պասիվ ծնողներին ինտեգրելու, ներգրավելու դպրոցական աշխատանքներում		
Կայուն համագործակցություն դպրոցի զարգացմանը նպաստող կառույցների և բարեգործների հետ:	1. Կայուն ֆինանսական ներդրումներ ունենալու համար անհրաժեշտ է ամրապնդել գործընկերային հարաբերությունները ներդրողների հետ: 2. Պետական հատկացումները ծախսել նպատակային՝ ուղղելով ուսուցիչների մասնագիտական կարողությունների որակական բարելավմանը: 3. Մեծացնել ծնողների ներգրավվածությունը ոչ միայն կատարված աշխատանքները գնահատելու, այլ նաև աջակցելու նպատակով: 4. Դպրոցում կատարվող աշխատանքների կառավարման որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ստեղծել	**Հաշվետու ժամանակահատվածում**	Տնօրեն Կառավարման խորհուրդ **Խորհրդակցական մարմիններ** **Լիազոր մարմին**

	գնահատման համակարգ, որի անմիջական աջակցողները պետք է լինեն դպրոցում կրթական գործընթացի մասնակիցները՝ սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողները, վարչական աշխատողները, կոլեգիալ կառավարման խորհուրդը, խորհրդակցական մարմինները:		
Ունենալ առաջադեմ գաղափարներով կրթված և դաստիարակված ազգային արժեքների խորը գիտակցմամբ օժտված աշակերտական համակազմ, որը պատրաստ է գիտության զարգացմանը զուգընթաց տիրապետել նորագույն տեխնոլոգիաների ընձեռնված հնարավորություններին:	1. Կազմակերպել զանազան մշակութային միջոցառումներ: Համագործակցել երիտասարդական կազմակերպությունների, ՀԿ-ների հետ: 2. Մշտադիտարկումները և առարկայի դասավանդման դրվածքի ուսումնասիրությունները 3. Քաղաքացիական դաստիարակություն, արժեհամակարգի, կարողունակությունների ձևավորում, մասնագիտական կողմնորոշման ապահովում	**Հաշվետու ժամանակ ահատվածում**	**Տնօրենություն Խորհրդակցական մարմիններ Ուսուցիչներ**
Դպրոցում ձևավորել սովորեցնելու և սովորելու մշակույթը:	1. Սեմինար-պարապմունքների միջոցով լրացնել թույլ կողմերը: 2. Դաստիարակչական աշխատաքների բարելավում, արդյունավետ մեթոդների կիրառում:	**2023-2028թթ**	Տնօրեն **Մեթոդ միավորումներ Ուսուցիչներ**

Դպրոցում Հանրակրթության պետական չափորոշչի ներդրման հետ կապված աշխատանքների իրականացում	**1. Իրականացնել սահուն անցում կարողունակությունների վրա հիմնված կրթության իրականացմանը և շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջների ապահովմանը ըստ կրթական աստիճանների:** 2. Կոմպետենտ (կարողունակ) քաղաքացիների ձևավորում: 3. Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարարական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում: 4. Տնօրենի, փսխտնօրենների և ուսուցիչների վերապատրաստումների իրականացում: 5. Մանկավարժական համակազմի համալրում հմուտ և փորձառու կադրերով Մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում:	**2023-2026թթ**	**Տնօրենություն Մեթոդ միավորումներ Մանկավարժակա ն աշխատողներ Լիազոր մարմին**
Ուշադրության կենտրոնում պահել սովորողների ռազմահայրենասիրական	Կյանքի կոչել ռազմահայրենասիրական դաստիարակության <<նոր **ռազմավարությունը**	**2023թ Պարբերաբ ար, ըստ**	**Տնօրենություն Դասղեկներ Ուսուցիչներ**

դաստիարակություն ապահովող միջոցառումները	**դպրոցում>> ծրագիրը՝ այն է** **1. Մասնագիտական** **կողմնորոշման միջոցառումներում ընդգրկել <<Հանդիպում սպայի հետ>> թեմայով միջոցառումներ** **2. Այց Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան:** **3. Այց Մոնթե Մելքոնյան վարժարան:** **4. Կազմակերպել միջոցառումներ <<ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ>> նվիրված տոներին:** **5. Հաճախակի** կազմակերպել հայրենասիրական թեմայով շարադրությունների, մրցույթներ: 6. Դպրոցում ստեղծել այնպիսի միջավայր, որ թե՛ դասերին, թե՛ միջանցքում աշակերտները մշտապես աչքի առաջ ունենան ազգայինն ու հայրենասիրականը:	**անհրաժեշտության**	
Ունենալ արդյունավետ ուսուցում իրականացող ուսումնական հաստատություն՝ միտված առաջընթացի, հաջողությունների,	**Իրականացնել հաջողությունների ամենամյա ամփոփում, որտեղ ներկայացվում է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն, ակտիվ ուսուցիչները, ծնողները և աշակերտներն էլ արժանանում են տնօրենի խրախուսանքին /պատվոգիր, շնորհակալագիր/:**	**Պարբերաբար, ըստ անհրաժեշտության**	Տնօրեն Կառավարման խորհուրդ

Տեխնոլոգիաների նպատակային օգտագործում, բազայի հարստացմանը միտված միջոցառումներ:	Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրոցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում Մեդիագրագիտության կարևորում ու զարգացում Մենթորական համակարգի ներդնում Օժանդակել ՏՀՏ ոլորտի ուսուցիչների մասնագիտական գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը: Հաճախակի դարձնել ՏՀՏ օգտագործմամբ ցուցադրական, օրինակելի դասերը, որոնցում կարտացոլվի կատարված աշխատանքները:	**Պարբերաբ** **ար, ըստ անհրաժեշ տության**	Տնօրեն Համակարգող Հաշվապահ
Առկա է մոտիվացիայի պակաս: Ոչ բոլոր **աշակերտներն են հետաքրքրված նորարարական ծրագրերով:**	**Ստեղծել համագործակցություն** **համայնքում հիմնված ԱԹՍ ստեղծարար կենտրոնի հետ: Համագործակցային դասերի միջոցով ստանալ առավելագույն արդյունք: Բարեգործների ներդրումների օգնությամբ սահմանել սովորողներ համար կրթաթոշակ**	**Հաշվետու ժամանակ** **ահատվածո ւմ**	**Տնօրենություն**
Իրականացված աշխատանքների	Կայք էջի լիարժեք և անխափան գործարկում:	**Հաշվետու**	Տնօրեն Հաշվապահ

թափանցիկության և հրապարակայնության ապահովում:	Հետևողականորեն ներկայացնել դպրոցի գործառույթներին վերաբերող փաստաթղթերը դպրոցի կայքէջում: Դպրոցի առաջընթացի, ձեռքբերումների, հիշատակի, հիշարժան օրերի լուսաբանում դպրոցի ֆեյսբուքյան էջում:	**ժամանակ ահատվածում**	օպերատոր
ներառական կրթության կազմակերպման համար պատշաճ պայմանների բարելավում:	Վերանորոգել և համապատասխան ուսումնական պարագաներով վերազինել ներառական կրթության համար նախատեսված սենյակը:	**2023-2024ուս. տարի**	Տնօրեն Համակարգող Հաշվապահ
Ներառական կրթությամբ սովորող աշակերտների ծնողների հետ որոշակի աշխատանքներ տանելու անհրաժեշտություն:	Հաճախակի հանդիպումներ ծնողների հետ, խնդիրների լուսաբանում:	**Պարբերաբար, ըստ անհրաժեշտության**	Տնօրեն Բազմամասնագիտական խումբ
Առկա է ուսումնառության բարձր արդյունքները խրախուսող ծրագրերի, մեթոդների պակաս:	Ուսումնական գործընթացում ներառել հետաքրքիր ծրագրեր, մեթոդներ, որոնք բարձրացնում են ուսուցման որակը: Սեմինար-պարապմունքների միջոցով լրացնել թույլ կողմերը: Կազմակերպել աշակերտական կոնֆերանսներ, մրցույթներ, վիկտորինաներ, ֆորումներ, ինտելեկտուալ խաղեր՝ սովորելու	**Պարբերաբար, ըստ անհրաժեշտության**	**Տնօրենություն Դասղեկներ**

	նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով		
Դպրոցում ձևավորել հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարին: Բարձր հիմքերի վրա պետք է պահել աշակերտ-համայնք-դպրոց կապը: Դպրոցը համայնքի համար ոչ միայն կրթական, այլև մշակութային օջախ է:	Ինքնավարությունը պետք է արտահայտվի Տնօրենություն աշակերտների ինքնադրսևորման կարծիքի ազատ արտահայտմամբ: Ամրապնդել աշակերտ – ուսուցիչ, աշակերտ – ծնող, աշակերտ – համայնք հարաբերությունները: Ինքնավարությունը պետք է արտահայտի և ապահովի աշակերտների իրավունքների պաշտպանությունը: Աշակերտական ինքնավարության միջոցով ապահովել աշակերտների կրթությունը և ինքնակրթությունը, նպաստել նրանց համակողմանի զարգացմանը:	Հաշվետու ժամանակ ահատվածում	Տնօրենություն Խորհրդակցական մարմիններ

6. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորված և իրականացված արդյունքների համեմատման գործընթաց է:

Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափեն ակնկալիքների կատարողականները

Դպրոցի զարգացման ծրագիրն իրականացնող ու վերահսկող շահառուների (դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները)՝ գործողությունների արդյունքների բավարարվածության աստիճանը:

Ցուցանիշները ամբողջացնում, ամփոփում են կատարված աշխատանքների արդյունքները և տալիս են իրավիճակի ընդհանուր գնահատականը:

Զարգացման ծրագրում նախատեսված աշխատանքները պետք է հանդիսանան տարեկան աշխատանքային պլանի բաղադրիչ և իրագործվեն երկար կամ կարճ ժամանակահատվածներում:

Այդ նպատակով անհրաշեշտ է՝

- Մշակել հստակ պլան՝ ուղղված ուսուցման արդյունավետության միջոցառումներին:
- Ուսուցման արդյունավետությանն ուղղված միջոցառումների պլանը քննարկել մանկավարժական խորհրդի նիստում:
- Առաջնորդվել քննարկված և հավանության արժանացած պլանով:
- Յուրաքանչյուր տարվա ավարտին քննարկել նրա արդյունավետությունը:

Արդյունքների գնահատման նպատակով անցկացնել սոցիոլոգիական հարցումներ՝

- Ծնողների շրջանում
- Աշակերտների շրջանում
- Համայնքում

- Վեր հանված խնդիրներն ու առաջարկությունները ներառել դպրոցի <<ներքին գնահատման>> հաշվետվության մեջ: Հաջորդ տարվա անելիքները պլանավորելիս հաշվի առնել վեր հանված խնդիրներն ու առաջարկությունները

7. ՌԻՍԿԵՐ

- Ֆինանասական ներդրումների պակաս:
- Երբեմն ուսուցիչների մասնագիտական պատրաստվածության ոչ պատշաճ մակարդակ:
- Կամավոր ատեստավորման գործընթացի վերաբերյալ անվստահություն:
- Ծնողական խորհրդի, խորհրդակցական այլ մարմինների պասիվություն:
- Կրթության նկատմամբ համընդհանուր վստահության ցածր ցուցանիշ:
- Սովորողների հետաքրքրությունների և մոտիվացիայի ցածր մակարդակ:
- Սովորողների թվի նվազում, կապված ծնելիության նվազման և արտագաղթի աճի հետ:
- Հանրակրթության նոր չափորոշիչի ներդրման հետ կապված դժվարություններ:

8. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ և ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

ԴՊՐՈՑԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ և ՍՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ՝

- Կայուն ֆինանսական ներդրումներ
- Բարձրացնել դպրոցում կատարվող աշխատանքների կառավարման որակը
- Բարձրացնել ուսուցման որակը
- Մանկավարժների գնահատման նոր նշաձողի սահմանում

Կայուն ֆինանսական ներդրումներ ունենալու

- Ամրապնդել գործընկերային հարաբերությունները ներդրողների հետ:
- Պետական հատկացումները ծախսել նպատակային՝ ուղղելով ուսուցիչների մասնագիտական կարողությունների որակական բարելավմանը:
- Մեծացնել ծնողների ներգրավվածությունը ոչ միայն կատարված աշխատանքները գնահատելու, այլ նաև աջակցելու նպատակով:

Դպրոցում կատարվող աշխատանքների կառավարման որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է՝

- ստեղծել գնահատման համակարգ, որի անմիջական աջակցողները պետք է լինեն դպրոցում կրթական գործընթացի մասնակիցները՝
- սովորողը,
- սովորողի ծնողը,
- ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողները,
- վարչական աշխատողները,
- կոլեգիալ կառավարման խորհուրդը,
- խորհրդակցական մարմինները:

Ուսուցման որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է՝

- Սովորողների ուսուցման ու զարգացման ապահովում դպրոցի կրթական ծրագրերի շրջանակում:
- Մեթոդական և դիդակտիկ նյութերով ապահովում:

- Սովորողներին շահագրգռել հետազոտական աշխատանքներ կատարելու համար.
- Նրանց համար վարչարարական հետազոտությունների կազմակերպման և իրականացման նպաստավոր պայմանների ստեղծում:
- Սովորողների հետազոտական գործունեության թեմատիկայի և բովանդակության համակարգում:
- Ուշադրության կենտրոնում պահելԿԱՊԿՈՒ սովորողների կրթությունը,ուսուցիչների համար պարբերաբար կազմակերպել սեմինարներ,դասընթացներ այդ ուղղությամբ:

Բարձր մակարդակով ՀՊՉ ներդրումը իրականացնեու համար անհրաժեշտ է՝

- Համագործակցել ԿԶՆԱԿ հիմնադրամի հետ
- Մասնակցել վերապատրաստումների
- Օգտվել ԿԶՆԱԿ-ի բլոգում առկա ուսումնական նյութերից
- Մասնակցել փորձի փոխանակմանը միտված ծրագրերի

Մանկավարժների գնահատման նոր նշաձողի սահմանում

Դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավում՝

- Կազմակերպման և ղեկավարման մեխանիզմների մշակում, որը պետք է ուղղված լինի մանկավարժների մասնագիտական որակավորման մակարդակի հետագա բարձրացմանը:
- Նորմատիվ իրավական և կազմակերպական այնպիսի նախադրյալների ստեղծում, որոնք կապահովեն դպրոցի մանկավարժական համակազմի մեթոդական աշխատանքի որակական բարելավումը:
- Մանկավարժներին աջակցել՝ մշակելու, ներկայացնելու և տպագրելու իրենց մեթոդական աշխատանքերի արդյունքների վերաբերյալ նյութեր:
- Շահագրգռել մանկավարժներին՝ կատարել հետազոտական աշխատանքներ, ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար:
- Մեթոդական աշխատանքների հիմնական ուղղությունների և բովանդակության համակարգում:
- Մանկավարժների մեթոդական աշխատանքների պահանջների բարձրացում:
-

- Մանկավարժների մեթոդական մշակումների մրցունակության ապահովում:

- Մանկավարժների հետազոտական գործունեության թեմատիկայի և բովանդակության համակարգում:
- Ուսուցիչների մասնակցություն կամավոր ատեստավորման:

- Դպրոցի մանկավարժական կազմին մշտապես տրամադրել մեթոդական, մասնագիտական գրականություն, ուսումնական առարկաների դասավանդմանն ուղղված մեթոդական ցուցումներով և հրահանգներով:
- Կրթության նորացված բովանդակության մշակում և ներդրում
- Մշտապես կազմակերպել ուսուցիչների վերապատրաստում ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակա կառույցներում: Վերապատրաստումն իրականացնել երկու ուղղությամբ՝ մշտական վերապատրաստում, որը նպատակաուղղված կլինի մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների կատարելագործմանը, և հերթական վերապատրաստում, որը պետք է օժանդակի ուսուցչի ատեստավորման գործընթացի դժվարությունների հաղթահարմանը:
- Ուսումնասիրել վերապատրաստում անցած ուսուցիչների մանկավարժական աշխատանքային արդյունավետությունը:
- Մեթոդական աշխատանքների հիմնական ուղղությունների և բովանդակության համակարգում:
- Շահագրգռել մանկավարժներին՝ կատարել հետազոտական աշխատանքներ, ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար:
- Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդել սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

9. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Հաճախակի անդրադառնալ դպրոցի զարգացման ծրագրին և հաշվի առնելով ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ կատարվող, ինչպես նաև հանրակրթության քաղաքականության ոլորտում իրականացվող փոփոխությունները, իրականացնել արդյունքների գնահատում, կատարել լրամշակում:

Ծգրում նախատեսված աշխատանքները պետք է հանդիսանան տարեկան աշխատանքային պլանի բաղադրիչ և իրագործվեն նախատեսված ժամանակահատվածներում:

Զարգացման հնգամյա ծրագրից առանձնացնել յուրաքանչյուր տարվա անելիքները , կատարել այն և ներկայացնել կատարման վերաբերյալ հաշվետվություն:

Զարգացման ծրագիրը ենթակա է փոփոխման ըստ անհրաժեշտության:

Զարգացման ծրագրի կատարումը պետք է լինի բաց քննարկումների, լրացումների, շարունակական շտկումների և փոփոխությունների համատեքստում: